



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(56)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

**ՀԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՈՐ ԵՎ
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱԳՈՒՍՏ ԱՆՎԱՆՈՂ
ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏՈՒՄ**

ՌԵԲԵԿԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հիմնաբառեր՝ բառապաշար, հնաբանություններ, պատմաբաներ, հագուստ, հեղինակային (անհատական) նորաբանություններ, հագուստի մշակույթ, փոխառյալ բառեր

Լեզուն նյութական, իրական աշխարհի, նրանում գործող փոխհարաբերությունների դրսևորումն է, իսկ լեզվի բովանդակային կողմը՝ նյութական աշխարհի արտացոլումը: Ժամանակակից լեզվաբանության հիմքում ընկած է լեզվի իմաստային-իմաստաբանական կողմի քննությունը: Լեզվի ներքին՝ բովանդակային կողմի վերլուծության հիման վրա 20-րդ դարի 60-70-ական թվականներին լեզվաբանության մեջ առաջ եկան այսպես կոչված լեզվաբանական դաշտերի մի շարք տեսություններ: Այս իմաստային դաշտերը բազմակողմանիորեն քննվել են ռուսական և եվրոպական գրականության մեջ, մինչդեռ հայ լեզվաբանության մեջ վերջին տասնամյակներում է, որ բառապաշարի որոշ խմբերի վերաբերյալ գրվել են հոդվածներ, մենագրություններ և պաշտպանվել են ատենախոսություններ:

Արդի հայերենն ունի բավական հարուստ բառապաշար: Այդ բառապաշարի մեջ իրենց ուրույն տեղն ունեն հագուստ անվանող արմատական բառերը, բառաբաղադրությունները, նորաբանությունները, նորակազմությունները, այն նոր ու նորագույն փոխառությունները, որոնք առայժմ չունեն իրենց համարժեքները, հնաբանությունները՝ հնաբառերը և պատմաբառերը

Լեզվաբանական գրականության մեջ ընդունված է հնաբանությունները երկու խմբի բաժանել՝ բուն հնաբանություններ և պատմաբառեր: Հնաբանությունների՝ երկու խմբերի տարբերակումը հստակ ձևակերպված է Ս. Էլոյանի կողմից. «Առաջին դեպքում հնանում են բառերը, սակայն նրանց անվանած երևույթները, հասկացությունները մնում են՝ փոխարինվելով այլ կենսունակ հոմանիշներով, իսկ երկրորդ դեպքում բառերը մնում են, բայց հնանում են նրանցով մատնանշված երևույթները, հասկացությունները» (Էլոյան 1989: 236):

Բուն հնաբանությունները բառապաշարի այն շերտին են պատկանում, որոնք ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով կորցրել են իրենց կենսականությունը, գործուն մասնակցություն չեն ցուցաբերում լեզվի հաղորդակցման գործընթացին և գործածությունից դուրս են եկել՝ անցնելով ոչ գործուն բառապաշար:

Լեզվի տարբեր փուլերում հնանում և գործածությունից դուրս են գալիս ոչ միայն քաղաքական կյանքին, մշակույթին, առևտրին ու դրամական հարաբերություններին, չափին ու կշռին, կենցաղային իրերին, այլև հագուստ-կապուստին վերաբերող բազմաթիվ բառեր:

Հագուստ-կապուստը մարդու անհրաժեշտ ուղեկիցն է. փոխվում են քաղաքական, մանավանդ տնտեսական, մշակութային գործոնները, փոխվում են նաև հասարակության պահանջները հագուստի մշակույթի ասպարեզում:

Փոխվում է հագուստի ձևը, գույնը, կտորի որակը, տեսակը, զարդանախշերը, հարդարանքի միջոցները, հագուստի և նրա բաղադրիչ մասերի շատ անվանումներ այլևս չեն համապատասխանում նորաձև, նորաճ հագուստներին, և բառակազմության ներքին օրենքներով ստեղծվում են նոր հոմանիշ անվանումներ: Հին անվանումները, կորցնելով իրենց անվանողական գործառույթը, ստանում են ոճական նշանակություն: Ասպարեզից դուրս գալով՝ դրանք հաղորդակցման գործընթացին չեն մասնակցում, այլ գործածվում են որոշակի ոճերում, հատկապես գեղարվեստական գրականության մեջ՝ խոսքային համապատասխան իրադրության պայմաններում (Աղայան: 136):

Խոսելով բուն հնաբանությունների մասին՝ Լ. Եզեկյանը գրում է. «Բուն հնաբանությունները ավելի շատ գործածվում են տվյալ երկի գեղարվեստականության բարձրացման, բովանդակության ավելի պատկերավոր, արտահայտիչ և համոզիչ դարձնելու նպատակով» (Եզեկյան: 129):

Բուն հնաբանությունների (ինչպես նաև պատմաբաների) տեսական հարցերով զբաղվել են մի շարք լեզվաբաններ, բայց մեր խնդիրն է գործնականորեն ներկայացնել այն հնաբաները, որոնք լեզվի տարբեր փուլերից հասել են մեզ, և այն բառերը, որոնք այսօր՝ աշխարհաբարի փուլում, մեր աչքի առջև դարձել են կամ դառնում են հնաբաներ:

Թեև Ս. Էլոյանը տեսականորեն հիմնավորել է հնաբանությունների՝ հնաբաների և պատմաբաների առանձնացումը, այնուամենայնիվ շատ դեպքերում գործնականորեն դժվար է որոշ հնաբաներ և պատմաբաներ տարբերակել, ուստի մենք առաջնորդվել ենք ԺՀԲԲ-ի և ԱՀԲԲ-ի՝ մեզ հետաքրքրող բառերի դիմաց տրված հնգ. և պատմ. նշումներով, ինչպես

նաև մեզ ծանոթ մի շարք բուն հայերեն և փոխառյալ բառերի գործածության նվազող հաճախականությամբ:

Ըստ արդի հայերենի բացատրական բառարանների տվյալների՝ հագուստ անվանող բուն հնաբանությունները հետևյալներն են՝ **աբա** (խիտ գործված բրդյա կտորից կարված տղամարդու վերնագգեստ), **արխալուղ** (տղամարդկանց և կանանց կարճ մինչև ծնկները հասնող հագուստ), **երախ** (քահանայական զգեստ՝ պճեղավոր շապիկ), **թղլիկ** (առանց եզրերի գլխարկ, չեպչիկ, փոթիկ), **թումբան** (բամբակյա տաք շալվար, անդրավարտիք), **լակաշ** (մաշված, պատառոտված կոշիկ), **խլա** (թիկնոց, պատմուճան), **խլապեռ** (շղարշ, նուրբ քող), **մանդիլ** (գլխաշոր, վարշամակ), **մուճակ** (տնային ոտնաման, չուստ), **չափքան** (կանացի զգեստ, որ հագնում էին շապկի վրայից), **չուխա** (մահուդե նուրբ կտորից կարված երկար վերարկու), **պախճավանդ** (սեղմիրան), **պապմուճան** (թիկնոց, վերնագգեստ), **պարեզոպ** (թեթև վերնագգեստ), **պլեդ»** (տղամարդկանց ուսերին զգելու բրդյա քառակուսի կտոր), **ռեդիկյուլ** (կանացի ձեռքի պայուսակ), **ռեդենզոպ** (տղամարդկանց երկար ու լայն վերարկու), **սփածանեղի** (գոգնոց, վրան զգելու շոր), **վզկապ** (պիոներական փողկապ), **ուրար** (2-րդ իմաստով՝ տղամարդկանց համար որպես գոտի կամ կանանց համար որպես գլխաշոր գործածվող կտոր), **փակեղ** (եկեղեցականի վեղար, վակաս, փիլոն իմաստներով), **փեղոյր** (տղամարդու կամ կնոջ հնամաշ գլխարկ), **օդ** (տրեխ, սանդալ, ոտնաման):

Այսօր մեր աչքի առջև հնաբառեր են դարձել **գդակ**, **ժաբո**, **լակաշ** (մաշված, պատռված կոշիկ), **խանձարուր**, **կապոպ**, **կրկնակոշիկ**, **մակինոպ** (թոշ, **պրեխ** (չարոխ), ինչպես նաև զինվորական հագուստների անվանումները՝ **գրապ**, **կոմունարկա**, **մունդիր**, **ֆրենչ**:

Պատմաբառերը լեզվի ոչ գործուն, պասիվ շերտին են պատկանում: Դրանք առաջացել են լեզվի պատմության որոշակի փուլերում (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար՝ նախախորհրդային և խորհրդային շրջաններ) հասարակական կյանքում կատարված տեղաշարժերի հետևանքով:

Պատմաբառերն իրենց գոյությամբ զգացնել են տալիս, թե լեզվի որ շրջանից են անցել աշխարհաբար, քանի որ դրանց արտահայտած առարկաները, երևույթները, հասկացությունները բնորոշ են եղել միայն լեզվական այս կամ այն փուլին: Հագուստ անվանող պատմաբառերը մեզ են հասել հիմնականում գրաբարից, քանզի գրաբարը ամենից լավ ուսումնասիրված և հայտնի լեզուն էր, երկար ժամանակ գրաբարը եղել էր գրի ու գրականության լեզու, ուսուցվող լեզու և, վերջապես, գրաբարի բառապաշարի վերաբերյալ կային մի շարք բառարաններ:

Պատմաբաները, ի տարբերություն բուն հնաբանությունների, չունեն իրենց հոմանիշ ձևերը, դրանք մի տեսակ **տերմինային** արժեք ունեն և գործածվում են հազուստի տարբեր տեսակներ (որոնք հետագա դարերում այլևս գոյություն չունեին) **անվանելու անհրաժեշտությունից** ելնելով: Խորհրդային հասարակարգի փլուզումից հետո բազմաթիվ քաղաքական, տնտեսական, մշակութային բառեր և տերմիններ դարձան պատմաբաներ: Խորհրդային դպրոցներում աշակերտները պարտադիր կրում էին կարմիր վզկապներ, իսկ բանակում կարմիր բանակայինները՝ **կոմունարկաներ** (գլխարկներ): Այսօր թե՛ **վզկապը**, թե՛ **կոմունարկան** դարձել են պատմաբաներ, որովհետև նրանց հիմքում ընկած հասկացությունները այլևս գոյություն չունեն:

Պատմաբաների գործածության ոլորտները սահմանափակ են. դրանք գերծածվում են գեղարվեստական, պատմա-գեղարվեստական և երբեմն նաև գիտական գրականության մեջ դարաշրջանին **ոճական երանգավորում** տալու նպատակով, դարաշրջանին բնորոշ միջավայր ստեղծելու միտումով, խոսքային իրադրության պահանջով, խոսքին ավելի վերամբարձություն, վեհություն տալու ցանկությամբ:

Հազուստ անվանող պատմաբաները հետևյալներն են՝ **աշխարավանդ** (թագավորական թագի ժապավեն), **ապարոշ** (գլխի փաթաթան), **արտախորակ** (խույրի կամ թագի արտաքին փաթեօց, ապարոշ), **բազկապան** (թևճակ), **բալախոն** (հին ռուսական լայն ու երկար վերնագգեստ), **գարդմանակ** (թագավորական թագի զարդ), **դիմակալ** (սաղավարտի շարժական մաս, որ հագնում էին դեմքը պաշտպանելու համար), **զանգապան** (զինվորական պաշտպանիչ հազուստի մաս), **լանջապահ**, **լանջապան**, **լանջապանակ** (լանջը պահպանող զրահ՝լանջագրահ = կրծքագրահ), **կզակալ** (սաղավարտի այն մասը, որ անց են կացնում կզակին՝կզակի տակով), **լողիկ** (թեթև վերարկու,թիկնոց), **խաչազգեստ** (վրան խաչի պատկեր ունեցող զգեստ), **խորգածորձ** (մազե **ծորձ**, մազե հազուստ), **խույր** (ակնեղենով զարդարված գլխանոց,որ կրում էին թագավորները, բարձրաստիճան իշխանավորները և կրոնավորները), **ծիրանի** (ծիրանագույն անթև զգեստ,որ հագնում էին թագավորները), **կամբակ** (փափուկ կաշվից պատրաստված թագավորական կոշիկ), **կորդակ** (գլուխը ծածկելու հարմարանք, գլխապան), **կուրտակ** (զինվորական սաղավարտի տեսակ), **ճոշան** (կրծքի զրահ, կրծապան, լանջապանակ), **սաղավարտ** (մետաղյա գլխանոց), **սրնքակալ** (սրունքները պաշտպանող հազուստ), **վարշամակ** (թաշկինակ, գլխաշոր, սրբիչ, չարսավ, պատանք), **վտավակ** (տակի զգեստ, զգեստ, վերարկու), **տառապրկ** (զինվորական

վերնազգեստ), **փակեղ** (վարշամակ, ուրար իմաստով), **քղամիդ**, **քցափ** (կրոնավորի գլխարկ), ինչպես նաև **ամազոնկա**, **խիտրոն**, **ջաբրոն**, **սուկան**, **տոգա**, **տունիկա** ևն:

Պատմաբաներն առատորեն գործածվում են պատմավեպերում, պատմական դրամաներում, պատմական թեմաներով գրված չափածո գործերում: Այս բնագավառում նրանց գործածությունը խիստ անհրաժեշտ է:

Ներկայացնենք հայ պատմավեպերից մի շարք փաստեր, որոնցում հանդես են գալիս բազմաթիվ պատմաբաներ:

Նա հազել էր պարսկական **պարմուճան** և երկարավուն գլխարկը գլխին, ոլորուն **մաշիկները** ոտներին՝ պարսիկ պիտի կարծվեր, եթե չլինեին նրա սենյակի դարանում դրված մագաղաթի ձեռագրերը և կազմերին խաչաքանդակ արծաթե, ոսկե ավետարանները (Դ.Դ, Վ, 34):

Վարդանը մոտեցավ, հանեց **սաղավարտը** և չոքեց մոր մահիճի մոտ (ն.տ. 77):

Նա օրերով գլխից չէր վերցնում **փաթթոցագլխարկը**, որի պատճառով գլուխը թողնում էր կարկտահարված արտի տպավորություն (Տ.Մ.: 29):

Ճերմակ, հաստ սրնքակալները նա բռնագրավել էր իսպանացիներից, ներքինի երկար **տոգան**՝ հելլեններից (ն.տ., 29):

Որդան կարմրագույն շապիկի վրայից հազել էր արքայական **ծիրանին**, գլխին դրել ոսկեճանճան, ատամնավոր վարսակալ **խույրը**, ոտքերը հագրել երկար ճերմակափայլ **սրնքազգեստներ** (ն.տ., 251):

Նա հազել էր զորապետի **տունիկան**, գլխին դրել նրա **սաղավարտը** ու, ծիծաղը հազիվ զսպելով, ողջունում էր լեգեոնականներին (ն.տ.: 502):

Իսկ ինքը՝ Համասփյուռը, ցանկանում է արդյոք հենց վաղը **ապարոշ** դնել գլխին (ն.տ., 99):

Իր փառահեղ գահի վրա բազմել էր արքայից արքա Տիգրանը, նրա ձախ կողքին Տիկնանց տիկին Համասփյուռն էր, աջ կողքին՝ արքայազն Արտավազդը, հետո՝ շքեղ **քղամիդներ** հագած չորս բղեշխներ, հազարապետ Փայլակ Մարգպետունին, արքայադուստր Նուանեն, զորապետ Մոմիկը, տակառապետ Գնունին (ն.տ., 526):

Բերված նախադասություններում պատմաբաները գործածվում են տվյալ պատմական ժամանակաշրջանին բնորոշ այլ բաների և բառակապակցությունների միջավայրում: Նրանք պատմականություն են հաղորդում, ստեղծում դարաշրջանի գեղարվեստական նկարագիրը միայն այլ բաների համատեղ գործածությամբ, ինչպես՝ դարանոց, մագաղաթյա, մահիճ, հելլեն, լեգեոնական, գահ, արքայից արքա,

տիկնանց տիկին, արքայազն Արտավազդ, բդեշխ, հազարապետ, արքայամայր, որդան կարմիր ևն:

Հայոց լեզուն դեռևս նախագրային շրջանից փոխառություններին զուգընթաց կերտել է հազարավոր նոր բառեր: Այդ գործընթացը լայն թափ է ստացել գրաբարում՝ գրերի գյուտից հետո, ինչպես նաև միջին հայերենում. գրաբարի և միջին հայերենի բառացանկը ամփոփված է «Նորբառգիրք Հայկազեան լեզուի» երկհատորյակում (1836-1837)՝ 51 հազար բառով: Հետագայում այդ բառացանկը համալրվել է 5000 նոր բառերով և հրատարակվել «Առձեռն բառարան» խորագրով: Գրաբարի և միջին հայերենի բառապաշարի զգալի մասը գրանցված և ստուգաբանված է Հր.Աճառյանի ՀԱԲ-ում: Նախորդ լեզվաբաններին դեռևս անձանոթ, անհայտ նոր բառեր են հանդիպում Ռ.Ղազարյանի և Հ.Ավետիսյանի կազմած «Միջին հայերենի բառարանում»:

Աշխարհաբարի նորաբանություններից 3000-ը գրանցվել են Ստ. Մալխայանցի «Հայերեն բացատրական բառարանում» (հհ. 1-4, Ե, 1944-1945):

Ի դեպ, աշխարհաբարի նորաբանություններին անդրադարձել է նաև Հր.Աճառյանը: ՀԱԲ-ում նա հիշատակում է մի շարք արմատներով կազմված նորաբանություններ: Հարյուրավոր նոր բառեր են արձանագրված ԺՀԲԲ-ում (հ. 1-4, Եր.: 1969-1980) և Էդ.Աղայանի ԱՀԲԲ-ում (մաս 1-2, Եր.: 1976):

Վերոհիշյալ բառարաններում գրանցված են հագուստի տարբեր տեսակները և դրանց բաղադրիչ մասերը անվանող բազմաթիվ նորաբանություններ, որոնց առաջացումը պայմանավորված է եղել հասարակական-քաղաքական, տնտեսական, առևտրական, առօրյա-կենցաղային կյանքում տեղի ունեցած փոփոխություններն անվանելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև բազմաթիվ օտար բառերի հայերեն համարժեքները ստեղծելու հրամայականով: Այդ բառերը իրենց կառուցվածքային կաղապարներով, կենսունակությամբ, բարեհնչությամբ, իմաստների տարողունակությամբ համապատասխանում են հասարակության պահանջներին, այդ պատճառով վերարտադրվել են, դարձել համագործածական բառեր, անցել համալեզվական բառերի շարքը և գրանցվել բառարաններում:

Այսօր դրանք այլևս նորաբանություններ չեն, ինչպես՝ եզրաժապավեն, կոշկաքիթ, **կոշկատակ, պսակաքող, քողազգեստ, գոտկատակ, գուլպաթել, օձիքածալ, ականջակալ, ուսաթել, կիսազգեստ, ուսածոպ, շրջազգեստ, շքատարազ, կիսաշապիկ, նավազաշապիկ, լողագոտի, կրկնակոշիկ, մարզահագուստ, մարզազգեստ, լողազգեստ, սուզահագուստ, ուսադիր, ենթաօձիք** ևն:

Էդ.Աղայանի ԱՀԲԲ-ի հրատարակումից անցել է մոտ 47 տարի: Այդ տարիների ընթացքում ստեղծվել են հազուստ անվանող նորանոր բառեր, բառակապակցություններ, որոնց մի մասը ընդգրկված է Ֆ.Խլղայանի «Նոր բառեր և իմաստներ բառարան-տեղեկատուում» (Ե.: 1982), մի մասը՝ Փ.Մեյթիխանյանի «Նոր բառերի բացատրական բառարանում» (Ե.: 1996), իսկ մի շարք բառեր էլ Ս.Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանում» (Ե.: 2001):

Փ.Մեյթիխանյանի բառարանում ամփոփված հազուստ անվանող նորաբանությունները հիմնականում վերաբերում են մարզական կյանքին: Այդ բառերը, բացի **մարզագգեստ, մարզահագուստ, լողագգեստ** բարդություններից, որոնք արդեն իսկ գրանցված էին Էդ.Աղայանի ԱՀԲԲ-ում, հետևյալներն են՝ **մարզակոշիկ, խաղակոշիկ, սեպակոշիկ, (վազքակոշիկ), լողագլխարկ, մարզաշապիկ, մարզահանդերձ, ինչպես նաև զապաշապիկ:**

Ս.Էլոյանն այս ցանկին ավելացրել է հազուստի անվանումներով կազմված այլ դաշտի իմաստ արտահայտող բառաբաղադրություններ, ինչպես՝ **զգեստանկարիչ, զգեստատիպ, ժամագոտի, կապագիծ, կապաշար, պսակառատ** ևն:

Հազուստ անվանող նորակազմությունների գործածության հիմնական ոլորտը հատկապես գեղարվեստական խոսքն է և այն խոսքերը, որոնք հիմնականում սահմանափակվում են նորմայի շրջանակներում: Եթե բուն նորաբանությունների առաջացումը պայմանավորված է լեզվում զգացվող բառերի պակասը լրացնելու և նոր առարկաներն ու հասկացությունները անվանելու անհրաժեշտությամբ, ապա անհատական նորաբանությունների երևան գալը պայմանավորված է խոսքային իրադրությամբ: Անհատական նորակազմություններն իմաստ են արտահայտում խոսքային միջավայրում, խոսքից դուրս նրանց իմաստները հաճախ անհասկանալի են, որովհետև այդ բառերն իմաստավորվում են գրողի կողմից ստեղծած համատեքստում: Բացի դրանից՝ նրանց ճնշող մեծամասնությունն ունի փոխաբերական իմաստ, որը բացահայտվում է մյուս բառերի իմաստների փոխադարձ կապի միջոցով: Ունենալով ոճական արժեք՝ նրանք հակված չեն վերածվելու լեզվական իրողության, մնում են խոսքային միջավայրում և մեծ մասամբ հասարակական ճանաչման չեն արժանանում:

Այնուամենայնիվ, անհատական նորաբանությունները որոշակի խոսքաշարում մեծ դեր են խաղում համապատասխան մտքի ձևավորման գործում, և, որ ամենակարևորն է, նրանց միջոցով խոսքը դառնում է առավել պատկերավոր, թարմ, սեղմ ու ինքնատիպ:

Գեղարվեստական խոսքի գեղագիտական մակարդակը բարձրացնելու գործում մեծ դեր են խաղացել այդ ասպարեզի մեծ երախտավորներ Րաֆֆին, Հովհ. Թումանյանը, Ավ.Իսահակյանը, Վ.Տերյանը, Ե.Չարենցը, Հովհ.Շիրազը, Պ.Սևակը, Հ.Հովհաննիսյանը, Վ.Դավթյանը, Հ.Սահյանը, Ս.Կապուտիկյանը և այլք:

Ավ.Իսահակյանի երազած ազատ, ներդաշնակ հասարակությունը **լուսազգեստ** է, Վ.Տերյանը աշնան գեղարվեստական պատկերը վրձնում է **ոսկեհանդերձ** բարդությանը, Հ.Հովհաննիսյանի նկարագրած լեռները ծածկված են **աստղաքողով**, իսկ ըստ Ռ.Դավոյանի մարդու երջանկությունը արտահայտվում է **ծաղկազգեստ** նորաբանությամբ: Վ.Դավթյանի երազած գեղեցկուհին **կապտաշղարշ** է, , ճերմակազգեստ մաքուր ու անբիծ:

Հոգեկան բարձր լարվածությունն ու շիկացումները լեզվական սովորական միջոցներով արտահայտելը թուլացնում է գեղարվեստական խոսքի ուժը, ուստի Ե.Չարենցը դիմում է թարմ, ինքնատիպ նորաբանությունների, որոնք նպաստում են խոսքի արտահայտչականության ուժեղացմանը: Այսպես՝ **կարմրազգեստ** ածականը, որը ուղիղ իմաստով կարող է դրական հույզեր առաջացնել, անմիջապես իմաստային այլ որակ է ստանում Ե.Չարենցի հզոր գրչի տակ փոխաբերաբար գործածվելիս և խորհրդանշում է «**կարմրազգեստ ֆիլիստերին**»՝ մեծ պոետի մշտարթուն դահճին, որը իր թույնն է թորում հանճարի վրա:

Անհուն վիշտը կրծում է ընթերցողի հոգին, անսահման վիրավորանքը խեղդում է կոկորդը, արցունքներ են գլորվում նրա այտերի վրայով, երբ ըմբռնում է **կնատարազ** նորաբանության սևակյան իմաստը («Անլուելի զանգակատուն» պոեմից):

Այդ ե՛րբ էր հայ տղամարդը կորցրել իր դեմքն ու դիմագիծը, հագել կնոջ զգեստ: Եղեռնի սահմուկեցուցիչ պատկերները, մի ողջ ժողովրդի բնաջնջումը, տղամարդկանց սրածումը, մոր և մանկան մորթուովելը խուճապ ու շփոթ են առաջացնում, ծնկի բերում հայ տղամարդուն: Նրան սպառնում է ոչ միայն ֆիզիկական ոչնչացումը, այլև նա բարոյական կորուստներ է կրում: Ահա թե ինչու **մահախուճապ** և **կնատարազ** նա փախչում է յաթաղանից՝ ընդմիշտ թողնելով իր հայրենի բնօրրանը:

Եղեռնի քստմնելի տեսարանները գերլարվածությամբ և անհուն վշտով ներկայացնելիս Հովհ.Շիրազը ստեղծել է բազմաթիվ նորաբանություններ, բայց առավել սահմուկեցուցիչը, որով արտահայտվում է հայրենի հողի կորուստը և հնագույն ազգի երկու միլիոն զավակների կործանումը, **մահաշուրջառ** նորաբանությունն է.

Ո՞նց եք ողջ ազգիս պատանքը կարել

Անապատներով այն **մահաշուրջառ** (Հ.Դ: 1990, 111):

Հագուստ անվանող բառերի իմաստային դաշտում իրենց ուրույն տեղն ունեն նոր և նորագույն փոխառությունները, որոնք կապված են աշխարհաբարի կազմավորման, ձևավորման և հետագա կատարելագործման փուլերին: Այս փոխառությունների տարբերակման ճշգրիտ ժամանակաշրջանը որոշ դեպքերում դժվար է սահմանազատել, որովհետև չկան յուրաքանչյուր ենթաշրջանի համար համապատասխան բառարաններ և ոչ էլ մի շարք գրողների ստեղծագործությունների համաբարբառներ, որոնցով հնարավոր լինել որոշել տվյալ փոխառության ճշգրիտ ժամանակաշրջանը: Այնուամենայնիվ, մենք նպատակահարմար համարեցինք մինչև նոր տնտեսակարգը՝ (մինչև XX դարի 90-ական թվականները) կատարված փոխառությունները կոչել նոր, իսկ դրանից հետո կատարվածները՝ նորագույն: Եվրոպական, ռուսական փոխառությունների առկայությունը պայմանավորված է եղել Եվրոպայի և Ռուսաստանի հասարակական-քաղաքական, տնտեսական, գիտական, մշակութային կյանքին հայերի հաղորդակից լինելով:

Աշխարհաբարի բոլոր փուլերում շարունակվել և այսօր էլ շարունակվում են բազմաթիվ բառերի և տերմինների փոխառությունները, որոնք կատարվել և կատարվում են և՛ **անմիջաբար**, և **միջնորդավորված** կերպով (հատկապես ռուսերենի միջնորդությամբ):

Արևելահայերենի զարգացման և հատկապես **բառապաշարի** հարստացման գործում հսկայական դեր է խաղացել **ռուսաց լեզուն**:

Սկսած XVII-XVIII դարերից հայ-ռուսական հարաբերությունները աշխուժանում են, իսկ ռուս-պարսկական պատերազմից հետո և հատկապես Հայաստանի խորհրդայնացման շրջանում սերտանում. հայերը անմիջականորեն հաղորդակցվում են ռուսերենին և նրա միջոցով՝ համաշխարհային արժեքներին:

Հայ-ռուսական հարաբերությունների հետևանքով աշխարհաբարի տարբեր փուլերում հայերենին են անցել մի շարք հագուստների ռուսական անվանումները ,որոնց մի մասը գործածվել է ռուսերենի խոսակցական լեզվում, ինչպես՝ **բերեպ, դուբյունկա, զապինկա, կոֆտա, կուրտկա, կուպալնիկ, մայկա, շապկա, շյապա, պիլոտկա, պոդյաժկա, պրյաժկա, պլավկի, պլաշչ, սարաֆան, սապոգ, վալենկա, վադալազկա, փուֆլի, ուշանկա** ևն: Համեմատաբար նոր են ռուսական **վեպրովկա** (կարճ, բարակ բաճկոն), **դվոյկա, փրոյկա** փոխառությունները:

Նշված փոխառությունների մեծ մասը գործածական է ինչպես ռուսերենի խոսակցական լեզվում, այնպես էլ փոխառյալ լեզվում՝ հայերենում: Դրանց մեծ մասը չի անցել հայերեն գրական լեզվին:

Մի շարք հագուստի անվանումներ թեև իրենց հիմքում չունեն ռուսական արմատներ, սակայն դրանք՝ իբրև բառեր, ձևավորվել են ռուսերենի բառակազմությանը համապատասխան՝ **ka** ածանցով և անցել են հայերենին իբրև ռուսական փոխառություններ, այսպես՝ **կեպկա** (կեպի) (ֆր. kep)՝ տղամարդու հովարավոր գլխարկ, **կոմունարկա** (ֆր. common)՝ զինվորականի սրածայր գլխարկ, որ կրում էին կարմիրբանակայիները, **տուժուրկա** (ֆր. toujours)՝ մշտապես, կնոջ կամ տղամարդու ամենօրյա կուրտկա, **ֆայկա** (ֆր. failie կտորի անունից)՝ մետաքսյա գործովի բարակ շապիկ, **ֆուֆայկա** (գործովի տաք շապիկ), **ֆուտբոլկա** (անգլ. football)՝ տրիկոտաժե մարզական շապիկ ևն:

Ռուսերենի միջնորդությամբ կատարվել են եվրոպական բազմաթիվ փոխառություններ, բայց համեմատաբար շատ են հայերենին անցած **ֆրանսիական փոխառությունները**, ինչպես՝ **բանտաժ, բլուզ, գալիֆե, ժարո, ժիլետ, լամպաս, լիվրեյ, կաշնե, կապիշոն, կապուր, կոմբինացիա (շապիկ), կոմբինեզոն, կոստյում, կորսաժ, կորսետ, մանթո, մանժետ, մունդիր, շարֆ, պալտո, պանամա, սերթուկ, փյուլ, փրիկո, ֆրակ** ևն:

Անգլիական փոխառություններ բրիջի, ժակետ, հոլիդեյ, մոկասի (անցել է ամերիկյան անգլերենից), **պիժամա** (ուրդու լեզվից անգլերենի միջոցով), **պիջակ, պլեդ, պուլովեր, ջեմպեր, սմոքինգ, ֆրենչ** ևն:

Գերմանական փոխառություններ՝ **բուշլապ, կիպել, շլեյֆ, շնուր, ցեպ, հունական** փոխառություններ՝ **պարիկ, սանդալ, սկաֆանդր:**

Լատինական փոխառություններ՝ **սոլ, ֆորմա:**

Հոլանդական փոխառություններ՝ **կարտուզ, մապրոսկա:**

Իտալական փոխառություններ՝ **պանչո, ֆիգարո:**

Վերջին ժամանակներս հայերենում աշխուժացել են ամերիկյան անգլերենով հնչվող փոխառությունները: Հայաստանում բացված անգլիական դպրոցները, անգլիական երաժշտությունը, կինոնկարները, հատկապես նորաձև հագուստների առքուվաճառքը թելադրում են հագուստ անվանող անգլիական բառերի մուտքը հայերենի բառապաշար, ինչպես՝ **գլխարկ-գլխանոցներ՝ բեսբոլ, կասկա** (սաղավարտ-գլխարկ, մետաղյա գլխարկ), **բանդանա** (գլխանոց՝ եռանկյունաձև, գլխի հետևում կապվող), **դոփինգ** (do pe'ng) (գլխանոց), վարտիքներ՝ **շորտիկ** (կարճ), **բրիջի** (միջին), **կապրի** (մինչև կոճերը), կիսաշրջազգեստներ՝ **մինի, միդի, մաքսի**, գուլպա՝ **գամաս** (մատներով կիսագուլպա), կոշիկ՝ **ուզգի** (երկարաճիտ) ևն:

Ինչպիսի՞ ճակատագիր ունեցան նոր փոխառությունները լեզվի հետագա զարգացման ընթացքում, ինչպիսի՞ն կլինեն դեռևս

չթարգմանված փոխառությունների և գրական համագործածական բառերի փոխհարաբերությունները:

Հայտնի է, որ դեռևս 1912 թվականին գրած «Հայ գրականության գալիք օրը» հոդվածում Վ.Տերյանը այն միտքն էր զարգացնում, որ 20-րդ դարի սկզբներին Եվրոպայում սկսվել էր մեծ հեղաշրջում տնտեսական ու մշակութային կյանքում, մարդկանց մտածողության ու զգացմունքի, ինչպես նաև արտաքին ձևերի՝ հագուստների մեջ: Որպեսզի հայ ժողովուրդը մտնի եվրոպական ընտանիք, նա պետք է յուրացնի եվրոպական արժեքները, մշակույթը, ընդունի նրանց լեզվական որոշ ձևեր, նոր օտար բառեր:

Այս կապակցությամբ բանաստեղծը քննադատում է Մխիթարյանների և արևմտահայերի լեզվաշինական գործունեությունը, ըստ որի՝ յուրաքանչյուր օտար բառ թարգմանվում էր հայերեն: Մի քանի օտար բառերի շարքում Վ.Տերյանը հիշատակում է **գալոշ** և **պալլոռ** բառերի հայերեն թարգմանությունները՝ **կրկնակոշիկ** և **վերարկու**: Ըստ նրա՝ օտար բառերը՝ **գալոշ** և **պալլոռ**, ավելի բարեհունչ են, ավելի դյուրըմբռնելի, քան հայերենի ձևերը, որոնք իբր թե անկենդան են, շինծու, անհասկանալի և մեր լեզուն դարձնում են դժվար յուրացվող, իսկ այն լեզուն է հաղթում, որն ավելի հեշտ է յուրացվում և ավելի պարզ է (Տերյան 1956: 523):

Վ.Տերյանի և նրա հետևորդների լեզվամշակման տեսությունը հետագայում ծայրահեղացվեց և իր բացասական ազդեցությունը թողեց լեզվի, մասնավորապես բառապաշարի զարգացման վրա: Ահա թե ինչու օտար բառերը է՛լ ավելի աշխուժացան XX դարի 20-ական թվականներից մինչև 50-ական թվականները:

Բանն այնտեղ հասավ, որ սկսեցին գործածվել անհարկի, ոչ տեղին փոխառություններ, որոնք ոչ թե նպաստեցին հայոց լեզվի զարգացմանը, այլ աղավաղեցին այն:

XX դարի 50-60-ական թվականներից՝ ազգային զարթոնքի ժամանակաշրջանում, սահմանափակվեց փոխառությունների մուտքը, ավելին՝ միտում առաջացավ օտար բառերը փոխարինել հայերեն համարժեքներով կամ դրանց զուգահեռ գործածել լեզվում արդեն իսկ առկա հայեցի ձևերը:

Հայոց լեզուն իր բառակազմական անսպառ հնարավորություններով՝ ածանցման և բառաբարդման ճանապարհով, լայն հնարավորություններ է տվել կազմելու հագուստի տարբեր տեսակների և նրանց առանձին բաղադրիչների անվանումներ, անհրաժեշտության դեպքում օտար բառերի համարժեքները վերցրել են գրաբարից կամ դիմել են արևմտահայերենի օգնությանը:

Ներկայացնենք հագուստ անվանող այն փոխառյալ բառերը, որոնք հայերենում ունեն իրենց համարժեքները. **բանտաժ-իրանակալ, բոսանոժկա-բոկոտիկ, բրյուկ-տաբատ, գալստուկ-փողկապ, էպոլետ-ուսադիր, լամպաս-ջրափոկ, լիֆ-կրծկալ, կալգոտկի-զուգագուլպա, կալոշ (գալոշ)-կրկնակոշիկ, կաշնե-վզարկու, կոմբինացիաներքնաշապիկ, կորսեթ-սեղմիրան, կորսաժ-իրանակալ, մանժետ-թեզանիք, մառյա-թանգիվ(\$), յուբկա-կիսաշրջազգեստ, նասկի-կիսագուլպա, շապկա-գլխարկ, շարֆ-վզնոց, վզկապ, շլեյֆ-քղանցքատուտ, շնուր-քուղ, պալտո-վերարկու, պետյա-մերակ (լամբակ), պիջակ-բաճկոն, պոդոյաժկա-գուլպայակալ, շավարակալ, պլավկի-լողազգեստ, պլաշ-թիկնոց, պոդվազկա-գուլպայակապ, պրյաժկա - զապոնկա - ճարմանդ, չափրաստ, պոդոյաժկա-շավարակապ, սկաֆանդր-ջրազգեստ, վալենկա - կաճյակ, վոդոլազկա - սուզազգեստ, տյուլ-շղարշ, տրուսիկ-ներքնավարտիք, ֆարտուկ-գոգնոց, ֆորմա-համա-զգեստ, ֆրակ-պոչազգեստ** ևն:

Ինչպես նկատելի է, հայերեն համարժեքները, թեև իրենց հնչյունակազմով երկար են, այնուամենայնիվ դյուրահունչ են, համապատասխանում են օտար բառերի իմաստին, ծավալով ծածկում են նրանց, հասարակության կողմից ընդունվել են և արձանագրված են բառարաններում: Ինչ խոսք, կան նաև անհաջող թարգմանություններ, ինչպես՝ պոչազգեստ (ֆրակ), նավագազգեստ (մատրոսկա) ևն:

Կան փոխառություններ էլ, որոնք, իրենց գործառույթով լինելով ազգային ձևերին հոմանիշ, նրանց մասնավոր տեսակն են անվանում՝ դրսևորելով հագուստի ձևի, որակի, երբեմն նաև կիրառական տարբերությունները: Այդ իսկ պատճառով այդ փոխառությունները ընդունվել են հասարակության կողմից, հայեցի ձևերին զուգահեռ գործածվում են: Այսպես՝ հայերենում կա **շապիկ** հնագույն փոխառությունը, բայց աշխարհաբարում կենցաղի մեջ մուտք գործեցին **մայկա, ֆայկա, ֆուֆայկա** հագուստի անվանումները: Շապիկ-ը իր իմաստի տարողունակությամբ, ծավալով չի համընկնում վերոհիշյալ փոխառությունների իմաստներին: Վերջիններս ինչ-որ չափով կատարում են շապիկ բառի գործառույթը, սակայն նրանից տարբերվում են ձևով, գործվածքի որակով և կիրառության ոլորտով: Այդ պատճառով էլ նշված օտար բառերը դեռևս թարգմանված չեն, բայց դասվել են համագործածական բառերի շարքը:

Նույն հիմունքով էլ հայոց լեզվում շարունակում են գործածվել **գլխարկ, կոշիկ** և ուրիշ շատ բառերի հոմանիշ փոխառությունները, որոնց իմաստները բառարանագիրները բացատրում են **նկարագրական**

եղանակով՝ նշելով դրանց ձևը, գործվածքը, գույնը, երբեմն նաև ազգային պատկանելությունը ևն:

Նախ ասենք, որ **գլխարկ** բառին համարժեք է ռուս. շապկան, որի տարբեր տեսակները հետևյալներն են՝ **բերեպ** (առանց հովարի փափուկ գլխարկ՝ մահուդից կամ կաշվից), **կարպուզ** (տղամարդու հովարավոր գլխարկ), **կեպի, կեպկա** (տղամարդու հովարավոր գլխարկ), **կոմունարկա** (տղամարդու զինվորական գլխարկ, որը կրում էին կարմիրբանակայինները), **շլապա** (կանանց կամ տղամարդու ծալովի գլխարկ՝ սովորաբար բարձր գագաթամասով), **պանամա** (ծղոտե լայնեզր գլխարկ), **պիլոտկա** (զինվորական, մասնավորապես օդաչուների ամառային գլխարկ), **ցիլինդր** (տղամարդու լայնեզր, գլանաձև գլխարկ), **ուշանկա** (ականջակալներով գլխարկ) ևն:

Ինչպես **գլխարկ**-ի առանձին տեսակները, որոնք չունեն իրենց հայեցի անվանումները, այնպես էլ մի շարք փոխառություններ հայերենում դեռևս չունեն իրենց համարժեքները, սակայն դարձել են հայոց լեզվի բաղադրիչը, գրանցված են բառարաններում, իսկ իմաստները բացատրված են նկարագրական եղանակով: Իհարկե, սա չի նշանակում, թե այդ բառերն անթարգմանելի են: Այսպես, **բալախոն** (հին ռուսական գյուղացիների լայն ու երկար վերնազգեստ), **բլուզկա** (տղամարդու կարճ և լայն վերնաշապիկ), **բուշլապ** (նավաստու մահուդե վերնազգեստ), **բրիջի** (կարճ տաբատ), **գրադ** (զինվորական վերարկու), **դուբլյոնկա** (կաշվից կարված վերարկու, վերնազգեստ), **ժաբո** (ժանեկազարդ ժանյակի զարդ տղամարդու շապկի օձիքին և կրծքին 18-րդ դարում, իսկ այժմ կանանց վերնաշապիկի կամ զգեստի վրա), **ժակեպ** (կանացի կարճ վերնազգեստ), **ժիլեպ** (տղամարդու կարճ հագուստ՝ առանց օձիքի և թևքերի, որը հագնում են պիջակի տակից), **լիվրեյ** (բարապանների՝ սպասյակների և կառապանների շքազգեստ) **կապիշոն** (հետ գցովի գլխարկ՝ միացած վերնազգեստին, կնգուդ), **կապոպ** (կանացի տնային զգեստ), **կիպեկ** (զինվորական կամ քաղաքացիական լանջերը բաց բաճկոն), **կոմբինեզոն** (օդաչուների, տանկիստների շապիկ ու վարտիքը միասին կարված), **կոսպոյում** (տղամարդու պիջակ և տաբատ, կանանց ժակետ և շրջազգեստ. կոմպլեկտ), **կոֆրա** (կանացի կարճ, սովորաբար մինչև գոտկատեղը հասնող վերնազգեստ), **կուրտկա** (տղամարդու կարճ վերնազգեստ), **հոլիդեյ** (լայնացող փողքերով տաբատ), **մանթո** (կանացի լայն վերարկու, առավելաբար մորթուց), **մոկասի** (հյուսիսամերիկյան հնդկացիների կաշվի փափուկ ոտնաման), **մունդիր** (զինվորական կամ քաղաքացիական հատուկ ձևի համազգեստ), **շինեկ** (զինվորական տաք, երկար վերարկու), **պուլովեր** (տղամարդու անօձիք և անթև բամբակե ֆուֆայկա), **պանչո, պենուար**

(կանացի առավուտվա զգեստ), **ջեմպեր** (առանց օձիքի և առանց կոճակի հյուսված շապիկ), **սերթուկ** (տղամարդու երկար, նեղ իրանով երկլանջ եզրով վերնազգեստ), **սմոքինգ** (բառացի՝ ծխելու բաճկոն, սև բաճկոնի տեսակ հանդիսությունների համար), **փոպիկ** (կանանց կարճ կամ երկար թևքերով վերնազգեստ, գոտկատեղից բարձր), **փրիկո** (բեմական կամ սպորտային կոստյում, որ ամուր գրկում է մարմինը), **փուֆլի** (անճիտք կոշիկ), **ֆարփինգե** (կնոջ յուբկայի տակից դրվող կարկաս կազմվածքին փարթամ տեսք տալու համար), **ֆրակ** (տղամարդու սերթուկի մի տեսակ՝ առջևից կարճ ու երկլանջեզրով, իսկ հետևից երկար միջահատված տուտով. հագնում են հանդիսությունների ժամանակ, պոչազգեստ), **ֆրենչ** (զինվորական քառագրպան կարճ բաճկոն), **ֆուպրոկա** (տրիկոտաժի մարզական շապիկ), **ֆուֆայկա** (գործովի տաք շապիկ):

Անթարգմանելի են փաստորեն տարբեր ժողովուրդներին բնորոշ ազգային տարազների անունները, ինչպես՝ ամազոնկա (ամազոնուհիների), **սարի** (հինդի՝ կանանց հագուստի հատուկ տեսակ՝ 5-7 մ երկարությամբ գործվածք, որ փաթաթվում է մարմնին, իսկ ծայրը անցկացվում է ուսից այն կողմ կամ զցվում է գլխի վրա), կիմանո, յապոնկա (ճապոնացի կանանց), **պանամա** (Պանամայի Հանրապետության անունից):

Որոշ հագուստի անվանումներ կապված են լավ կամ վատ գործերով հայտնի անձանց անվան հետ, ինչպես՝ **բարձովկա** (ռուս. борец армяտից)՝ հաստ կտորից կամ կաշվից, ռետինե ներբանով կոշիկ, հիմնականում մարզական, **գալիֆե** (ֆրանսիացի հեծելազորային գեներալ Galliffette-ի անվամբ, որը հայտնի է իր դաժանությամբ փարիզյան կոմունարների նկատմամբ 1871թ.)՝ անդրավարտիք՝ մինչև ծնկները նեղ փողքերով և դեպի կողքերը լայնացող մասով, **մակինտ(թ)ոշ** (շոտլանդացի քիմիկոս Մակինտ(թ)ոշի անվամբ)՝ անջրաթափանցիկ վերարկու, **ֆիգարո** (իտ. գրական և օպերային («Ֆիգարոյի ամուսնությունը») ժանրի կերպար)՝ անթև, գոտկատեղից մի փոքր բարձրացող հագուստ, ժիլետ, **ֆրենչ** (անգլիացի ֆելդմարշալ Ֆրենչի անվամբ)՝ զինվորական քառագրպան կարճ բաճկոն:

Եթե փոխառությունը թարգմանվում է հայերեն, ապա օտար ձևի գործածությունը այլևս խրախուսելի չէ, այն դառնում է օտարաբանություն: Օտար բառերը իրենց հնչյունակազմով, տառակազմով, հատուկ վերջավորությամբ իրենց զգացնել են տալիս: Այդ են վկայում վերոհիշյալ բոլոր փոխառությունները, որոնք չունեն իրենց հոմանիշ համարժեքները հայերենում, սակայն դրանք ժամանակի ընթացքում կարող են ձուլվել ազգային ձևերին և դառնալ հայոց լեզվի բաղադրիչը:

Կյանքը զարգանում է, ստեղծվում են հագուստի նորանոր տեսակներ և, բնականաբար, դրանք անվանող բառեր, օտար լեզուներից կատարվում են բազմաթիվ փոխառություններ, իսկ հնաբառերը և պատմաբառերը հավերժ կապրեն մեր լեզվի ոչ գործուն բառապաշարում՝ կիրառություն ստանալով միայն գեղարվեստական գրականության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Եր. 1976:
2. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր. 1984:
3. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Եր., 2003:
4. Էլոյան Ս. Ժամանակակից հայերենի բառային ոճագիտություն, Եր., 1989:
5. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.. Միջին հայերենի բառարան. հ. I, Երևան, 1987, հ. II, 1992:
6. Ջահուկյան Գ., Աղայան Էդ., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, I մաս, Ա պրակ., Եր., 1980:
7. Սուքիասյան Ա., Ժամանակակից Հայոց լեզու, Եր., 1982:

REFERENCES

1. Aghayan Ed. Ardi hayeren bacatrakan bararan, Er., 1976:
2. Aghayan Ed., Yndhanur ev haykakan baragitutyun, Er. 1984:
3. Eezekyan S., Vochagitutyun, Yr. 2003:
4. Eloyan S. Jamanakacic hajereni barajin vochagitutyun, Er. 1989:
5. Ghazaryan R., Avetisyan H. Mijin hayereni bararan, h .I , Er.1987, h. II, Yr. 1992
6. Jahukyan G., Aghayan E., Arakelyan V., Qosyan V., Hayoc lezu, I, mas, A, prak., Er. 1980
7. Sukiasyan A. Jamanakacic hajoc lezu, Er, 1982:

РЕБЕКА МАРГАРЯН - АРХАИЗМЫ, НЕОЛОГИЗМЫ И ЗАИМСТВОВАНИЯ В СМЫСЛОВОМ ПОЛЕ СЛОВ, НАЗЫВАЮЩИХ ОДЕЖДУ

Ключевые слова: словарный запас, архаизмы, исторически образованные слова, одежда, неологизмы, авторские новообразования, заимствованные слова, культура одежды

Армянский язык имеет очень богатый словарный запас. Частью этого словарного запаса являются слова, называющие одежду. В этой статье мы представляем архаизмы, заимствованные слова и неологизмы смыслового поля слов, называющих одежду.

REBEKA MARGARYAN - ARCHAISMS, NEOLOGISMS, BORROWINGS IN THE SEMANTIC FIELD OF WORDS DENOTING CLOTHES

Keywords: *lexicon, archaisms, historical words, clothes, neologisms, author's new formation, loanwords/borrowing, clothes culture*

The Armenian language has rich lexicon. The part of that lexicon is comprised of words naming clothes. In this article we present archaisms, neologisms and loanwords/borrowing in the semantic field of words denoting clothes.

Ներկայացվել է՝ 20.01.2021
Գրախոսվել է՝ 20.01.2021